Հավելված 1

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

«ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊՈՂՈՏԱ-ԿԱՍԿԱԴ» ԾՐԱԳՐՈՎ ԲԱՑԱՌԻԿ ԳԵՐԱԿԱ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՏՆԱՀԱՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ԼՍՈՒՄՆԵՐԻ

Օրը՝ 2019 թվականի հոկտեմբերի 7:

Վայրը՝ ԱԺ նիստերի դահլիճ (առավելագույնը 150 նստատեղ):

Տևողությունը՝ 10:00-16:00 (ընդմիջում՝ 13:00-14:00):

Լսումներին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել մինչև ամսի 5-ը՝ ժամը 18:00-ն՝ նամակ ուղարկելով gayane.abrahamyan@parliament.am էլեկտրոնային հասցեին:

Լսումների ընթացքում նախատեսվում է առնվազն երեք բանախոսի զեկույց՝ 20-ական րոպե տևողությամբ: Յուրաքանչյուր զեկույցին կհաջորդի 20 րոպե տևողությամբ հարցուպատասխան:

Բանախոսների զեկույցների շրջանակներում կարծարծվեն հետևյալ թեմաները. գործընթացի կազմակերպման և իրականացման տարբեր փուլերում առկա իրավախախտումները, դրանցից բխող հետագա գործընթացները միջազգային դատարաններում և պետության կրած հսկայական վնասները, օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը, ինչպես նաև կնշվեն այդ տարիներին քաղաքացիների սեփականության խախտված իրավունքների վերականգնման հնարավոր իրավական ուղիները:

Բացման խոսքով հանդես կգա Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանը:
Վերջին մեկնկես ժամը կհատկացվի ելույթներին. հերթագրման գործընթացը կտևի լսումների սկզբից մինչև ընդմիջման ավարտը: Կախված ելույթների համար հերթագրված անձանց թվից և նկատի ունենալով ելույթների համար սահմանված 90-րոպեանոց ժամանակահատվածը՝ լսումները վարողը կսահմանի ելույթների հնարավոր օպտիմալ ժամանակը:

Օրակարգը լսումներից առնվազն երեք օր առաջ կտեղադրվի Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ